ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ
ՄՄ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՍԻՄԵՈՆ Ա. ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՋԱՄԲՌ»-Ի

Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի (1763-1780 թթ.) հեղինակած «Ջամբռ»[1] աշխատությունն արժեքավոր տեղեկություններ է ընդգրկում Ս. Էջմիածնի և ռուսական պետության միջև փոխհարաբերությունների հաստատման վերաբերյալ, որը Հայոց հայրապետի գործունեության կարևորագույն ուղղություններից է եղել:

ԺԸ. դ. Արևելյան Հայաստանը շարունակում էր գտնվել պարսկական տիրապետության տակ: 1747 թ. կազմակերպված դավադրության հետևանքով սպանվում է Նադիր շահը, և երկրում ստեղծվում է քաոսային վիճակ[2]: Դրա հետևանքով, փաստորեն, քայքայվում է պարսկական միասնական պետությունը՝ առավել ծանր և անորոշ վիճակ ստեղծելով տարածաշրջանի քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում՝ հայերի համար: Ռուսական պետության հզորացումը և տարածաշրջանում հաստատվելու քաղաքականությունը հայ ազատագրական միտքը սևեռում են դեպի այդ հզորացող երկիրը: Ռուսական կայսրությունը, ընդառաջ գնալով տեղի քրիստոնյա ժողովուրդների այդ ձգտումներին, շահագրգռված էր ամրապնդել իր հարավային սահմանները, զարգացնել առևտուրն ու արհեստները: Այս և այլ հանգամանքներով պայմանավորված՝ Ռուսական կայսրությունն սկսում է խրախուսել հայ ազգաբնակչության առևտրային և արհեստագործական գործունեությունը: Որպես հետևանք՝ Ռուսական կայսրության հարավային սահմաններին առաջանում է հայկական մի ստվար գաղութ: Հայկական գաղութի կարևորագույն խնդիրներից էր նաև ազգաբնակչության հոգևոր հարցերի կարգավորումը:

Ռուսահայ գաղթօջախի հնագույն կենտրոնն Աստրախան քաղաքն էր, որտեղ ԺԸ. դարասկզբին հայ ազգաբնակչության թիվը հասնում էր

---

[1] «Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ եւ շարագրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար եւ վշտակոծ կաթուղիկոսէ Երեւանցւոյ», Վաղարշապատ, 1873 (այսուհետև՝ «Ջամբռ»):

[2] Տես **Վ. Բայբուրդյան**, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2006, էջ 380:

գրեթե 2000-ի[3]: 1763 թ. քաղաքի հայ բնակչությունը կազմում էր 500 տուն[4]: Մինչև ԺԸ. դ. կեսերը Ռուսական կայսրությունում հայերը կազմում էին եկեղեցական առանձին թեմ, որի առաջնորդ եպիսկոպոսը նշանակվում էր Մայր Աթոռի կողմից՝ միաժամանակ հանդիսանալով նաև Ս. Էջմիածնի նվիրակ[5], այսինքն՝ նրան էր վերապահված նվիրատվություններ հավաքելը և դրանք Մայր Աթոռ ուղարկելը: Ըստ «Ջամբռ»-ի՝ այդ իրավիճակը փոխվել է Ղազար Ջահկեցի կաթողիկոսի գահակալության ժամանակաշրջանում, երբ 1749-ին տեղի հայությունը դեմ է դուրս եկել Ս. Էջմիածնի ներկայացուցիչ Բարսեղ եպս. Փառակեցուն[6]:

Այդպիսով, 1749-ից Ս. Էջմիածինը կորցրել է Աստրախանի թեմի նկատմամբ հոգևոր իշխանությունը: Դրանից հետո թեև նվիրակներ էին ուղարկվում Աստրախան, սակայն տեղի հայությունը, ըստ երևույթին, գտնվում էր Գանձասարի կաթողիկոսության իշխանության ներքո: Ուշագրավ է Մաղաքիա արք. Օրմանյանի տեսակետը հետագա իրավիճակի վերաբերյալ, ըստ որի՝ Ղազար Ջահկեցուն հաջորդած կաթողիկոսները «կարեւորութիւն չտուին» այս հանգամանքին[7]:

Ըստ Սիմեոն Երևանցու՝ այդ իրավիճակն անփոփոխ է մնում շուրջ երկու տասնամյակ, երբ Ս. Էջմիածինը չէր կարողանում իր եպիսկոպոսներին ուղարկել Աստրախան, իսկ նվիրակները մեծ դժվարությամբ էին գործում՝ հանդիպելով Գանձասարի կաթողիկոսության ներկայացուցիչների դիմադրությանը: Կարելի է արձանագրել, որ հետագա տասնամյակների ընթացքում ռուսահայոց թեմը, մասնավորապես Աստրախանը գտնվում էր Գանձասարի կաթողիկոսության ենթակայության ներքո: Այս հանգամանքը որևէ կերպ ընդունելի չէր կարող լինել Սիմեոն Ա. Երևանցու համար, քանի որ նա Ս. Էջմիածինը դիտարկում էր որպես հայ ժողովրդի միասնականության կենտրոն՝ այս տեսանկյունից մոտենալով նաև ռուսահայոց թեմի խնդրին:

Պետք է նշել, որ Ս. Էջմիածնի՝ ռուսական արքունիքի հետ փոխհարաբերությունների հաստատման առաջին քայլերից մեկը կատարել է Հակոբ Շամախեցի (1759–1763 թթ.) կաթողիկոսը դեռևս 1760-ին: Նրա

---

[3] Տես **В. Хачатурян**, Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII в., ՏՀԳ, 1965, թ. 7, էջ 78:

[4] Տես **Պ. Զորանյան**, Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ. դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 224:

[5] Տես «Ջամբռ», էջ 38:

[6] Անդ, էջ 39:

[7] **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 3530:

դիմումը[8] ընդհանրական մի խնդրանք էր կայսրուհի Ելիզավետա Պետրովնային, որ վերջինս «ականջալուր լինի հայերի, վրացիների և մյուս քրիստոնյաների պաշտպան» վրաց Թեյմուրազ Բ.(1744-1762 թթ.) թագավորի պատվիրակության խնդրին[9]: Գործնական որոշակի խնդիր չպարունակող այս դիմումը որևէ պատասխան չի ունենում: Մինչդեռ՝ Սիմեոն Ա. Երևանցին իրագործում է որոշակի քայլեր, որոնց նպատակն էր ռուսահայոց թեմը Ս. Էջմիածնի ենթակայությանը վերջնականապես վերադարձնելը: Խնդիրը լուծելու համար պահը շատ հարմար էր ընտրված: Այդ ժամանակ Գանձասարի աթոռը փաստացի պառակտված էր. չնայած դրան՝ Գանձասարի Իսրայել կաթողիկոսն Աստրախան է ուղարկում իր նվիրակ Խաչատուրին: Իր հերթին Սիմեոն Ա. Երևանցին ուղարկում է իր նվիրակին՝ Հովհաննես վրդ. Քանաքեռցուն[10]: Ս. Էջմիածնի նվիրակը ոչ միայն չի կարողանում որևէ կերպ հակազդել Գանձասարի աթոռի ներկայացուցչին, այլև «նրան անպատուում էին և չէին ընդունում»[11]: Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսը 1764 թ. Աստրախանի առաջնորդ Ստեփանոս վարդապետին գրած իր ուղերձում պատվիրում է՝ «...վասն գանձասարցոց ապօրինաւոր նուիրակացն, զի մի տեղի տայցէ եւ ընդունիցի»[12]:

Դեպքերի հետագա զարգացումը հնարավորություն է ընձեռում Սիմեոն կաթողիկոսին՝ առավել գործուն զբաղվելու Աստրախանի թեմը Ս. Էջմիածնին ենթարկելու խնդրով: Դա մեծապես պայմանավորված էր նաև Գանձասարի հակաթոռ կաթողիկոսների՝ հայրապետի հովանավորությունն ու նրա հաստատումն ստանալու ձգտմամբ: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ ռուսական արքունիքին դիմելը Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսը հաջողեց միայն 1766 թ.՝ «Յովհաննէսը հնազանդութեան բերելով, եւ Իսրայէլը աթոռազրկութեամբ եւ բանադրանօք տկարացնելով»[13]:

Թեև աղբյուրներում ռուսական արքունիքի հետ փոխհարաբերությունների հաստատումը հիմնականում պայմանավորված է Աստրախանի թեմի խնդրի կարգավորմամբ, այդուհանդերձ, ինչպես Լեոն է նշում, Հա-

---

[8] Տես "Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века", сборник документов, том III, отв. ред. В. Восканян, Ереван, 1978, էջ 333, վավ. 228:

[9] ՄՄ, «Կաթողիկոսական դիվան», թղթ. 243, վավ. 18:

[10] Տես «Ջամբռ», էջ 39:

[11] «Դիւան հայոց պատմութեան», հրատ.՝ Գիւտ քհնյ. Աղանեանց, գիրք Գ., «Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով», Թիֆլիս, 1894, էջ ՃԻԵ. (այսուհետև՝ «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ.):

[12] Անդ, էջ 84:

[13] Խոսքը Գանձասարի հակաթոռ երկու կաթողիկոսների մասին է. տես **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 3531:

յոց հայրապետը նպատակ ուներ Ռուսաստանի «ցիրուցան համայնքներից մի թեմ կազմելու և Էջմիածնի իրավասության տակ դնելու»[14]: Դեպքերի հետագա զարգացումը ցույց է տալիս, որ կաթողիկոսի դիմումը ռուսաց կայսրին և Ս. Էջմիածնի առաջ քաշած խնդրանքը միայն Աստրախանը Գանձասարի ազդեցությունից հեռացնելու միտում չեն ունեցել: Դրանք իրապես ռուսաստանյան հոգևոր թեմի խնդիրները կարգավորելու նպատակ են հետապնդել:

Սիմեոն Ա. Երևանցին այդ կարևոր առաքելությանը նախապատրաստվել է ամենայն մանրամասնությամբ: Եվ պատահական չէ, որ Հայոց հայրապետը գումարում է եպիսկոպոսաց ժողով, որը և որոշում է դիմում հղել ռուսաց կայսրին[15]:

1766 թ. Պետերբուրգ է ուղարկվում դեսպանություն՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ, որն իր հետ տանում էր կաթողիկոսի դիմումը՝ ուղղված Եկատերինա Բ. կայսրուհուն (1762-1796 թթ.): Այդ դիմումով Սիմեոն Երևանցին ներկայացնում էր ռուսահայոց եկեղեցական գործում Ս. Էջմիածնի հստակ դիրքորոշումը և իր խնդրանքը: Կաթողիկոսն իր ուղերձում նաև մանրամասն բացատրում էր Ս. Էջմիածնի առաքելությունը և հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի նշանակությունը. «...քանզի յայտնի է տերութեանդ Ձերում, որ բոլորի ազգիս հայոց միմիայն է պատրիարքութիւն, որ սկսեալ է ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ, որոյ պատրիարքարանն է քաղաքս այս Վաղարշապատ եւ Աթոռն նորին՝ լուսակերտ տաճարս այս սուրբ Էջմիածին, յորմէ բոլոր ազգս հայոց կախեալ կան, ուր և իցէն, եւ որոց եկեղեցիք եւ դէտք եկեղեցեաց, վարդապետք, քահանայք եւ ամենայն ժողովուրդք ըստ ամենայնի ընդ հրամանաւ սորին պարաւանդին եւ շարժին որքան առ հոգեւոր եւ եկեղեցականն գործ»[16]: Ներկայացնելով Հայ եկեղեցին պառատկող ուժերը՝ հայրապետը հայտնում էր կայսրուհուն, որ արդեն «ԺԶ. և ԺԷ. ամ է, յորս սրբոյ Աթոռոյս հոգեւոր իշխանութիւնն ամենեւին բարձեալ է ի ժողովրդենէ մերմէ» և Ս. Էջմիածնի հոգևոր պաշտոնյաների մուտքն արգելված է այդ երկրում, ապա հարցնում է՝ «...ոչ գիտեմք, թէ յիրաւի տէրութիւնդ Ձեր գիտէ, թէ ոչ»[17]:

---

[14] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Բ., Երևան, 1973, էջ 281:

[15] Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ., էջ ՃԻԵ.:

[16] "Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.)", сборник документов, том IV, под ред. М. Нерсисяна, Ереван, 1990, էջ 70, վավ. 33 (այսուհետև՝ "Армяно-русские отношения в XVIII веке", том IV):

[17] Անդ, էջ 71:

Սիմեոն Երևանցին իր դիմումով առաջ էր քաշում ռուսահայոց թեմերի կարգավիճակի խնդիրը, այն է՝ ա. խնդրում էր կայսրուհուն, որ վերջինս իր հրովարտակով «Հայկածինք եւ լուսավորչակրօնք» ժողովրդին հնազանդեցնի Ս. Էջմիածնին, բ. Ռուսական կայսրության տարածքում գործեն միայն Ս. Էջմիածնի կողմից նշանակված եպիսկոպոսները, գ. առանց Ս. Էջմիածնի կողմից նշանակված եպիսկոպոսի գիտության՝ որևէ հոգևորականի իրավունք չտրվի մուտք գործել հայկական թեմ: Ուշագրավ է նաև Սիմեոն Երևանցու՝ կայսրուհուն ուղղված այն նկատառումը, որ «եւ խնդիրս այս՝ ոչ եթէ միայն ազգիս մերոյ եւ մեզ է օգուտ, այլեւ օրհնեցելոյ երկրիդ եւև ազգիդ ձերոյ եւս բարեվայելուչ ամրափակութեան սահման ըստ ամենայնի»[18]:

Ս. Էջմիածնի դեսպանությունը միանգամից չի հաջողել իր առաքելությունը: Ըստ աղբյուրների հաղորդած տեղեկությունների՝ Սիմեոն Ա. Երևանցին այդ ընթացքում փորձում է իր բարձրացրած խնդիրների լուծմանը նպաստելու գործում ներգրավել նաև Ռուսական կայսրությունում ապրող և հեղինակություն վայելող հայ գործիչներին[19]: Առանձին դիմում է ուղարկում նաև Աստրախանի ռուսաց մետրոպոլիտ Մեֆոտիին. նվիրաբերելով նաև Նոյան տապանից մի կտոր՝ այլ ընծաներով հանդերձ[20]: 1767 թ. մի գրությամբ կաթողիկոսը խնդրում է աջակցել իր դեսպան Դավիթ վարդապետին՝ «Զորս ի յաւանեալք քոյ ըստ մերոյ հայցուածոյ, արդարեւ յարամնայութիւն է սիրոյ ճշմարիտի, զոր յուսամ իսկ, եւ կատարումն տիրական հրամանին: Քանզի ի յայս կան բովանդակեալք ումն պատուիրանք, եւ գործք հաճէլիք Աստուծոյ, զոր յարամնաց պահեսցէ տէր իւրով ողորմութեամբն»[21]:

Դավիթ վարդապետի հետ ուղարկված գրությամբ Հայոց հայրապետը դիմում է նաև Աստրախանի ժողովրդին՝ Ս. Էջմիածնի դեմ հանդես եկող հայերի ու Մայր Աթոռի նվիրակի միջև լարված հարաբերությունները հարթելու նպատակով[22]: Արդյունքում հաջողվում է հասնել նրան, որ «Դաւիթ վարդապետն... ի հասանիլն ի Հաշտարխան՝ ըստ պատվիրանի սրբազան հայրապետին, առէալ էր զհաշտութիւն ի մէջ ժողովրդեանն եւ նուիրակին»[23]:

---

[18] Անդ:
[19] **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, էջ 3532:
[20] Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ., էջ ՃԻԷ.:
[21] ՄՄ, ձեռ. Հփ 2912, 215բ:
[22] Տես Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ., էջ 499-500:
[23] ՄՄ, ձեռ. Հփ 4479, 4բ:

Պատվիրակությունն իր առջև դրված խնդրի կատարման համար, ըստ «Ջամբռ»-ի, դատարկաձեռն չէր գնացել Ս. Պետերբուրգ: Դեսպանությունն իր հետ տանում էր Նոյան տապանի, Ս. Հովհաննես Կարապետի, Ս. Գևորգի մասունքներից և Ս. Հռիփսիմյանց նշխարներից՝ չորս բաժին ոսկեջրած արծաթյա տուփով[24]*:*

Սիմեոն Երևանցու՝ ռուսաց կայսեր միջոցով ռուսահայոց թեմը Ս. Էջմիածնին ենթարկելու ծրագիրը պսակվում է հաջողությամբ: Բնական է, որ հայկական կողմի խնդրանքը բավարարելիս ռուսական արքունիքը հետապնդում էր իր շահերը և ուներ հստակ դրդապատճառներ, որոնցից մեկն էլ ռուս-թուրքական հասունացող հակամարտությունն էր: Եկատերինա Բ. կայսրուհին «Հրամայէ գրել զհրովարտակ առ ամենայն տէրութիւնս իւր եւ առ յամենայն ազգս հայոց»[25]*: Դատելով հրովարտակի բովանդակությանից՝ կարելի է փաստել, որ Սիմեոն Ա. Երևանցու բոլոր խնդրանքները կատարվել են:*

Եկատերինա Բ.-ի՝ 1768 թ. հունիսի 30-ով թվագրված հրովարտակը մասնավորապես սահմանում էր. ա. Ռուսական կայսրության տարածքում հայ ժողովուրդը կարող էր ազատորեն դավանել իր հավատքը՝ հայ հոգևոր կանոններով ու եկեղեցական կարգերով, բ. Ս. Էջմիածնի կաթողիկոսներին էր վերապահվում եպիսկոպոսներ ու հոգևոր այլ պաշտոնյաներ նշանակելու իրավունքը, գ. առանց Հայոց հայրապետի գրավոր թույլտվության որևէ հոգևորական չէր կարող մուտք գործել կայսրության տարածք, որի վերաբերյալ համապատասխան ցուցումներ են ուղարկվում ռուս սահմանապահներին: Այս հրովարտակով Ռուսական կայսրությունը միաժամանակ իր բարձր հովանու ներքո էր վերցնում հայ բնակչությանը[26]*:*

Կայսրուհին իր գոհունակությունն է հայտնում Սիմեոն Երևանցու ուղարկած նշխարների և Նոյան տապանի մասունքի համար: Նա, իր հերթին, Հայոց հայրապետին է ուղարկում թանկարժեք նվերներ՝ մի կապոց ոսկեհուռ գեղեցիկ գործվածք, երկու կապոց ոսկեգործ ժանյակ: «Ջամբռ»-ից տեղեկանում ենք, որ տվյալ հրամանագիրը գրվել է ոսկյա գրերով, ընդ որում, նաև թարգմանվել է հայերեն, և երկուսն էլ ու-

[24] «Ջամբռ», էջ 39-40:

[25] Անդ, էջ 40:

[26] Հրովարտակը պահվում է ՄՄ-ում առանձին ցուցակով (ցուցակ 30, «Հրովարտակներ»), վավերագիր առաջին: Այն հրատարակվել է դեռևս ԺԹ. դարի կեսերին. տես «Մեղու Հայաստանի», 1858, թ. 45, եր. 356. նաև՝ **Մեր մագիստր. Մեսրեան**, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէոնէ մինչ Յովհաննէս (1763-1831), Մոսկուա, 1876, էջ 161-163. “Армяно-русские отношения”, том IV, էջ 76:

դարկվել են Ս. Էջմիածին ու պահվել են Մայր Աթոռում՝ հատուկ տուփով[27]: Ինչպես երևում է՝ հրովարտակը ստանալու գործում իր կարևոր ներդրումն է ունեցել նաև Հովհաննես Լազարյանը (1735-1801 թթ.): Նա 1768 թ. սեպտեմբերին կաթողիկոսին ուղղված իր նամակում գրում է. «...սուրբ օրհնութեամբ Ձերով արժանի եղէ եւ կարողացայ զպիտանի եւ զօգտալի հրամանն ի գլուխ բերել»[28]:

Ինչպես տեսնում ենք՝ ռուսական կայսրության հետ փոխհարաբերություններ հաստատելու գործում Սիմեոն Ա. Երևանցու ջանքերը ոչ միայն հաջողվում են, այլև, ինչպես «Ջամբռ»-ում է նշված, Եկատերինա Բ. կայսրուհին «լիովին եւ քան զխնդրեալն առաւել կատարէ զխնդիրն»[29]: Այդ մասին Սիմեոն Երևանցին գրում է նաև 1770 թ. Եկատերինա Բ. կայսրուհուն ուղղված իր շնորհակալական ուղերձում[30]: Նա երախտագիտություն է հայտնում, որ կայսրուհին իր հովանավորության ներքո է վերցնում հայ հպատակներին: Այս հանգամանքը հետագայում արտահայտվելու էր հայ ազգաբնակչության, մասնավորապես հայ առևտրականների նկատմամբ արտոնությունների շնորհմամբ ու հայկական գաղութների կազմակերպման խրախուսմամբ, որի հիմքերը դրվեցին 1768 թ. կայսերական այս հրովարտակով: Այն, ինչպես նշում է Մ. արք. Օրմանյանը, «կրնանք նկատել իբր հիմն եւ արմատ այն սերտ յարաբերութեան, որ հաստատուեցաւ Հայոց կաթողիկոսութեան եւ Ռուսաց կայսրութեան մէջ»[31]:

Նշենք, որ կայսրուհուց ստացված նվերներն օգտագործվում են Հայոց հայրապետի համար հատուկ հանդերձանք և Ս. Իջման Սեղանի համար վարագույր կարելու նպատակով: Սիմեոն Ա. Երևանցին կատարում է իր խոստումը՝ հայկական եկեղեցիներում աղոթքի ժամանակ սկսում է հնչել կայսերական մաղթանք՝ «վասն մեծապայծառ տօնախմբութեան նորին»[32]: Ընդ որում, այս կարգը գործել է մինչև Ռուսական կայսրության կործանումը՝ 1917-ը[33]: Բացի այդ՝ 1771 թ. Սիմեոն Երևանցին հեղինակում է «Գիրք հանդիսադրութեանց տօնից կայսերականաց» աշխատությունը, որտեղ ի երախտագիտություն հայերի նկատմամբ կայսերական հովանավորչության՝ «...ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարէն. վասն որոյ

[27] «Ջամբռ», էջ 40:
[28] "Армяно-русские отношения", том IV, վավ. 40, էջ 78:
[29] «Ջամբռ», էջ 40:
[30] Տես "Армяно-русские отношения", том IV, վավ. 56, էջ 104:
[31] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 3533-3534:
[32] Անդ, էջ 3534:
[33] Տես **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Գ., էջ 282:

զայս քան բանս շարագրեցաք վասն մեծապայծառ Տօնախմբութեան Նորին... եկեղեցականօք եւ աշխարհականօք մեծաւ հանդիսաւորութեամբ կատարեսցեն զայս կարգ»[34]*:*

Կարող ենք փաստել, որ դրանից հետո Հայոց կաթողիկոսության և ռուս պետական գործիչների միջև հաստատված շփումներն առավել գործնական են դառնում: Հայոց հայրապետը հնարավորություն է ստանում հայությանը հուզող այս կամ այն խնդրի վերաբերյալ դիմել ռուս պետական ու հոգևոր գործիչներին, ինչը հետագայում մեծապես նպաստում է հայ վերաբնակիչների խնդիրների լուծմանը և հայկական գաղութի կայացմանը:

1768 թ. Մինաս վարդապետը նշանակվում է ռուսահայոց թեմի առաջնորդ և Ս. Էջմիածնի նվիրակ[35]*: Սակայն Սիմեոն Երևանցու մոտեցումը ռուսահայոց թեմի նկատմամբ ենթադրում էր առավել գործուն քաղաքականություն: Դրանով է, թերևս, պայմանավորված այն, որ 1773 թ. կաթողիկոսն իր աշակերտ, եպիսկոպոս Հովսեփ Արղությանին (1743-1801 թթ.) նշանակում է ռուսահայոց թեմի առաջնորդ: Վերջինս 1774 թ. ժամանում է Աստրախան*[36]*: Այս նշանակման առնչությամբ կաթողիկոսն Աստրախանի նահանգապետ Կրեչետնիկովին գրում է նամակ, որտեղ վերջինիս ծանուցում է Հովսեփ Արղությանի նշանակման մասին*[37]*: Հակված ենք կարծելու, որ այս նշանակումը որևէ կերպ կապված չէր Ս. Էջմիածնի նվիրակի գործունեության հետ, քանի որ Մինաս վարդապետը, ըստ ամենայնի, շարունակել է վարել Մայր Աթոռի նվիրակի պաշտոնը: Համենայն դեպս, Աստրախանում վերջինիս գործունեության վերաբերյալ տեղեկություններ կան 1775-ից*[38] *մինչև 1777-ը*[39]*:*

Հովսեփ Արղությանը նպատակային գործունեություն է ծավալում և մերձենում ռուսական արքունիքի, պետական գործիչների հետ[40]*: Արդյունքում՝ 1778 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո, հենց նրան է վստահվում հայ ազգաբնակչության գաղթի կազմակերպումը Ղրիմից՝ «ի Կաֆայու, ի Բայղչասարայու, ի Ղարասուլու, ի Գոզլովու եւ ի շրջա-*

---

[34] ՄՄ, «Կաթողիկոսական դիվան», թղթ. 4, վավ. 43. ՄՄ, ձեռ. Հ՚ 7788, թերթ 4բ: ՄՄ-ում է պահվում Սիմեոն Երևանցու հեղինակած այս գործը. ինքնագիր ստորագրությամբ է:

[35] Տես «Ջամբռ», էջ 50:

[36] Տես **Պ. Զորանյան**, նշվ. աշխ., էջ 303:

[37] Տես "Армяно-русские отношения", том IV, վավ. 59, էջ 112:

[38] Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ը., էջ 446:

[39] Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք ԺԱ., էջ 58:

[40] **Г. Эзов**, Начало сношений Эчмиадзинского патриаршего пристола с русским правительством, հրատարակման թիվ եւ վայր, с. 10-11.

կայ Ղասաբայից եւ գիւղօրէից նոցին»[41]*: Նրանք հետագայում հաստատվեցին նոր հիմնադրված Նոր Նախիջևան բնակավայրում*[42]*: Այդ առումով հայտնի է 1781 թ. Ս. Աստվածածին եկեղեցու հիմնադրման առիթով Սիմեոն Երևանցու կոնդակի ընթերցումը*[43]*:*

Ուշագրավ են «Ջամբռ»-ի այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ռուսահայոց թեմին: Մասնավորապես՝ 1765 թ. Սիմեոն Երևանցու կողմից կանոնակարգված հայկական թեմերի ցանկում հստակ առանձնացված է Ռուսաստանյան թեմը. «Հաշտարխան, որ է Տէրունի. ի տիրախնամ եւ ի Կայսրեապերճ մայրաքաղաքդ Պետրպուրգ. ի Մոսկով. ի Հաշտարխան. ի Ղզլար[44]*. ի Սառաֆան. ի Բօրաղան. ի Չերքեզ. եւ այլ շրջակայ...»*[45]*: «Ջամբռ»-ում պատկերը գրեթե նույնն է՝ մի շարք կարևոր հավելումներով. «Հաշտարխան քաղաքն, ընդ որով են եւ սոքա: Պետրպուրգ. Մոսկով. Ղզլար. Սառաֆան. Բօռաղան. Չէրկէզ. Մոզդոդ. եւ նորոգ շինէալ Նոր Նախիջևան եւ Գրիգորիապոլ. եւ նորոգ ապացեալ ի յՕսմանցւոց՝ Ղռիմ*[46] *կոչեցեալն իւրով ամենայն սահմանօքն, այսինքն է՝ Քէֆէ, Էսկի-ղրիմ, Ղարասու, Ազմեշիտ, Գէօղլով, Բաղչասարայ, եւ Օրբազար»*[47]**:**

Ինչպես տեսնում ենք՝ «Ջամբռ»-ի այս տեղեկությամբ թեմի աշխարհագրական ընդգրկումը բավական ընդարձակ է: Այդպիսով, ռուսահայոց թեմը, ըստ «Ջամբռ»-ի, ներառել է նաև Ղրիմի հայկական բնակավայրերը:

«Ջամբռ»-ում առկա այդ կարևոր լրացումը հիմք է տալիս կարծելու, որ ռուսական արքունիքից հրովարտակ ստանալուց և ռուս-թուրքական 1768–1774 թթ. պատերազմից հետո, երբ Ղրիմը, փաստորեն, անցել է Ռուսական կայսրության հովանավորության տակ[48] *և կազմակերպվել է*

---

[41] **Վ. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 37:

[42] Տես «Հայոց պատմություն», հ. Գ., «Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.)», գիրք Բ. (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Երևան, 2015, էջ 385:

[43] Տես **Վ. Բարխուդարյան**, նշվ. աշխ., էջ 55:

[44] Հայ վաճառականների մասին, որոնք հաստատվել էին Հյուսիսային Կովկասում՝ Թերեքի ավազանում, հիշատակություններ կան ԺԸ. դարի 20-30-ական թվականներից: Հայկական հոծ բնակչություն է հաստատվել մասնավորապես Ղզլարում և Մոզդոկում. տես **Լ. Պողոսյան**, Հայկական գաղթավայրերի առևտրատնտեսական կյանքի պատմությունից (Ղզլար և Մոզդոկ, XVIII դար—XIX դարի առաջին կես),ՊԲՀ, 1986, թ. 1, էջ 85-96:

[45] ՄՄ, ձեռ. Հմ 9120, 2բ:

[46] 1744 թ. դրությամբ թվարկված բոլոր բնակավայրերը հիշատակվում են իբրև հայաբնակ. տես **Վ. Միքայելյան**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 112:

[47] ՄՄ, ձեռ. Հմ 978, 162բ:

[48] Տես **Е. Дружинина**, Кючук-Кайнарджинский мир 1774 года, Приложение № 3, Артикул третий, էջ 350:

հայ բնակչության գաղթ, ռուսահայոց թեմն ընդլայնվել է, ավելի ճիշտ կլինի ասել՝ Հովսեփ Արղությանին է վերապահվել նաև Ղրիմի թեմերի ղեկավարման իրավասությունը:

Այն, որ «Ջամբռ»-ում նախատեսված է եղել մանրամասնել ռուսահայոց թեմերի վերաբերյալ տեղեկությունները, այն էլ՝ երկու գլխի շրջանակներում, երևում է բնագրից, որտեղ դատարկ տեղ է թողնվել նոր գլուխներ ավելացնելու և դրանց թվահամարները լրացնելու համար. «... զորոյ գլխովին որպէսն ի (...) եւ ի (...) գլուխն տէսցէս»[49]*:*

Ամփոփելով՝ նշենք, որ «Ջամբռ»-ը ռուսական պետության հետ փոխհարաբերությունների հաստատման վերաբերյալ կարևոր տեղեկություններ է ընդգրկում, որոնք որոշ դեպքերում բացառիկ են և շատ արժեքավոր:

РЕЗЮМЕ

В статье по сведениям «Джамбра» Симеона Ереванци и других источников исследованы вопросы установление взаимоотношений Св. Эчмиадзинас Российской империей. В связи чем был также урегулирован вопрос о юрисдикции армянский епархии в России. В статье также представлены основные вопросы деятельности Армянской делегации, практические цели обращения к Екатерине Второй и основное значения ее указа. Изучены также вопросы связные с армянской епархией, вопросы ее управления, деятельности «нвираков» и дальнейшое расширение епархии в связи с ситуацией сложившийся после русско-турецкой войны (1768-1774 гг.).

SUMMARY

On the basis of Simeon Yerevantsi's "Jambr" and other information sources in this article was examined the establishment of relationships between Mother See of Holy Etchmiadzin and the Russian Empire, which has also settled the question of the jurisdiction of the Russian - Armenian dioceses. In the article are presented the delegation problems to Russia sent by Simeon Yerevantsi, the main goals of the request to Empress Catherine II of Russia and her published edict's practical significance. In terms of the issue are observed also Armenian dioceses, their management, the activity of nviraks and further expansion questions of the diocese, which got significance especially in the period of created situation after the Russian-Turkish war in 1768-1774.

[49] ՄՄ, ձեռ. Հմր 978, 162բ: